

ԱՊԱԳԱ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՄԻՋՍԵՐՆԴԱՅԻՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ
Սիմոնյան Հ. Ս.

Հոդվածում քննարկվում է ներկայիս սերունդների՝ ապագա սերունդների հանդեպ պատասխանատվություն ստանձնելու հիմնախնդիրը, որը առավել կարևոր շեշտադրում է ստանում միջսերնդային արդարության հղացքի քննարկման շրջանակներում: Աշխատանքում անդրադարձ է կատարվում այն դրդապատճառներին, որոնք հարմար հող են նախապատրաստում ապագայի մարդկանց բարօրության մասին հոգալու համար: Հոդվածում ներկայացվում են նորագույն շրջանի որոշ մտածողների հայացքները, ինչպես նաև ապագա սերունդների հանդեպ պատասխանատվության լավատեսական ու հոռետեսական հարացույցների բնութագիրը:

Բանալի բառեր. միջսերնդային արդարություն, պատասխանատվություն, ապագա սերունդներ, լավատեսական հարացույց, հոռետեսական հարացույց:

Տեխնոլոգիական հսկայական առաջընթացի, օրեցօր աճող բնապահպանական խնդիրների այս դարաշրջանում ավելի հաճախ է խոսվում միջսերնդային արդարության մասին: Քննարկումներն ավելի են թեժանում, երբ արծարծվում է ապագա սերունդների հանդեպ պատասխանատվություն ստանձնելու խնդիրը: Վերջինս, պարզ է, միտված է մի նպատակի, այն է՝ ստեղծել նպաստավոր պայմաններ ապագա սերունդների բարօրության համար: Աշխատանքի նպատակն է վերհանել այն անկյունաքարերը, որոնք ապագա սերունդների հանդեպ պատասխանատվության հիմնահարցի՝ որպես սոցիալ-փիլիսոփայական թեմայի քննարկման, ինչպես նաև հայեցակարգային տարբեր մոտեցումների վերլուծության խթան են հանդիսանում:

Միջսերնդային հարաբերությունների մասին մտայնություններում բավականին ուշագրավ է մեր՝ ապագա սերունդների հանդեպ պատասխանատվություն ունենալու հիմնախնդիրը: Ներկայիս պայմաններում ապագա սերունդների հանդեպ պատասխանատվությունը, որը նախկինում քիչ թե շատ դիտվում էր որպես ավանդական «պատասխանատվություն» տերմինի բաղկացուցիչ մաս, վերջին տասնամյակներում, կարելի է ասել, նորովի իմաստավորվեց: Բանն այն է, որ ապագա սերունդների հանդեպ պատասխանատվություն կամ որևէ պարտավորություն ունենալու հարցը հետզհետե տարանջատվեց պատասխանատվության վերաբերյալ համընդհանուր քննարկումներից՝ դառնալով հանրային քննարկման առանձին թեմա և ստանալով անհամեմատ ավելի մեծ ուշադրություն, քան նախկինում:

Նախորդ դարից սկսած՝ մարդկությունը ավելի տեղյակ է դարձել շրջակա միջավայրի անընդհատ աճող խնդիրներին, որոնք մասամբ առաջացել են տնտեսական և տեխնոլոգիական զարգացման արդյունքում: Նախանշվում է նաև, որ այս կործանարար գործընթացը արագանում է, ու հետագայում խնդիրները նույնիսկ ավելի ծանր կլինեն: Այս համատեքստում առաջքային մտահոգությունն այն է, թե արդյոք բացասական հետևանքներ առաջացնելու մեր կարողությունը ինչ-որ կերպ պարտավորեցնում է մեզ փոխել մեր իսկ գործողությունները: Ավելորդ է նշել, օրինակ, որ ներկայիս որոշ գործողություններ կարող են վնասել մեզից հարյուր տարի հետո ապրող սերունդներին: Հարց է առաջանում՝ արդյոք դա բավարար պատճառ է, որ մենք, վերանայելով մեր գործողությունները, գործենք այլ կերպ: Նմանատիպ հարցադրումները տանում են ապագա սերունդների հանդեպ պատասխանատվության վիճահարույց հարցին, ինչպես նաև նրան, թե ինչպես կարող է այդ պատասխանատվությունն ազդել ներկայիս մարդկանց գործողություններին: Մենք երբեք չենք հանդիպի ապագա սերունդներին, սակայն նրանք պատկերացում կկազմեն մեր մասին՝ դատելով այն աշխարհից, որը մենք թողնում ենք նրանց [4]: Թեման ուսումնասիրողների մեկ այլ խումբ, որին կոչում են պատմության լավատեսներ, պնդում է, որ կարիք չկա վերանայելու կամ փոխելու մեր գործողությունները, քանի որ մարդկության պատմության մեջ կան որոշ համընդհանուր միտումներ, որոնք ի վերջո կհանգեցնեն ապագա սերունդների մեծագույն օգուտին: Այս լավատեսությունը, բնականաբար, ավելորդ է դարձնում ապագա սերունդների հանդեպ

պատասխանատվության մասին խոսելը: Առանձնացվում են չորս հիմնական փաստարկներ, որոնք բերվում են հոգուտ վերոնշյալ լավատեսության:

-**Տեխնոլոգիական առաջընթաց.** ըստ շատ մտածողների՝ սրանից բխում է այն ողջամիտ ենթադրությունը, որ մարդիկ, բավականաչափ ճարպիկ լինելով, շրջակա միջավայրի խնդիրների մեծ մասը ի վիճակի կլինեն լուծել տեխնոլոգիայի օգնությամբ:

- **Փոխարինում կամ փոխհատուցում.** յուրաքանչյուր բնական ռեսուրս կարող է փոխարինվել կա՛մ այլ բնական ռեսուրսներով, կա՛մ մարդաստեղծ ռեսուրսներով:

-**Սակավությունը կփոխի դրդապատճառները.** տնտեսական այս պնդումն ասում է, որ ռեսուրսների սակավությունը տնտեսապես պարարտ հող կդառնա նոր գործիքակազմ ստեղծելու կամ էլ ներկայի վարքաձևը փոխելու համար, այսինքն՝ վարքի մի ձևը ավելի ձեռնտու կդառնա, քան մյուս տեսակները:

-**Հարստության կուտակում.** անատարկելի փաստ է այն, որ կապիտալ ռեսուրսների միջտերմային փոխանցումները եկող սերունդներին ավելի հարուստ են դարձրել, քան նախորդներն էին (ի դեպ, կուտակվող ռեսուրսների շարքում նշվում է նաև մարդկային գիտելիքը): Կուտակման շնորհիվ ապագա սերունդները կկարողանան հաղթահարել բնապահպանական ծախսերը, ինչպես նաև էական տեխնիկական ներդրումների անհրաժեշտությունը:

Վերոնշյալ չորս փաստարկները ենթադրում են, որ ապագա սերունդները հարուստ ու բարվոք վիճակում կլինեն, քան մենք, կամ առնվազն կլինեն նույն վիճակում, որում մենք ենք, սակայն ոչ երբեք ավելի վատթար վիճակում: [4] Այս փաստարկների գոյությունը բնավ չի նշանակում, որ չպետք է խոսենք ապագա սերունդների հանդեպ պատասխանատվությունից: Ավելին, պետք է դիտարկենք նաև այն հակափաստարկները, որոնք ջանում են ամրապնդել մեր՝ հաջորդ սերունդների հանդեպ պատասխանատվություն կրելու հրամայականը: Պատմության ընթացքում մարդկությունը մշտապես մշակել է նոր գործիքներ, իսկ արդյունաբերության զարգացումը հնարավորություն է տվել առավել արդյունավետ եղանակով գործիքներ հորինել, արտադրել և օգտագործել: Սա մարդու ներկա վիճակի անօտարելի փաստ է: Այդուհանդերձ, պատմական միտումները կարող են չշարունակվել դեպի ապագան, ուստի կարող են սահմանափակումներ լինել, թե ինչպիսի գործիքներ կարող են հորինվել, և թե ինչպիսի ազդեցություն

դրանք կունենան: Տեխնոլոգիան կարող է ունենալ սահամանափակումներ. այն չի կարող հավերժ լուծել մարդկության խնդիրները: Ապագայում հնարավոր են անդառնալի անկումներ, քայքայումներ: Տեխնոլոգիական առաջխաղացումը կարող է օգտագործվել՝ նվազագույնի հասցնելու այն ազդեցությունները, որոնք բնական ուժերն ունեն մարդկության վրա, սակայն չի կարող ամբողջապես կանխագուշակել ու վերահսկել այդ ուժերի գործողությունները:

Փոխարինումը ենթադրում է, որ եթե բնական ռեսուրսը կարող է տնտեսապես արդյունավետ կերպով փոխարինվել արհեստական ռեսուրսով, որը նման է կամ ավելի լավ է բոլոր համապատասխան առումներով, ապա այդ ռեսուրսը կարող է արդյունավետ փոխարինվել: Հարցն այստեղ այն է, թե որքան հաճախ է դա տեղի ունենում գործնականում: Երբեմն անհրաժեշտ է փոխարինել բնական ռեսուրսը մի քանի բնական կամ տեխնածին ռեսուրսներով: Այդ դեպքում ճիշտ չէ ասել, որ ռեսուրսն **ամբողջությամբ** փոխարինված է:

Պետք է նշել, որ դրդապատճառների, միտումների փոփոխության համար ժամանակ է անհրաժեշտ, իսկ բացասական միտումները կարող են շարունակվել երկար ժամանակ, մինչև քայլեր ձեռնարկվեն այն փոխելու համար: Արդյունքում բացասական միտումը կարող է լինել անդառնալի:

Ինչ վերաբերում է հարստության կուտակմանը, ապա, անշուշտ, ճիշտ է, որ նախորդ սերունդների ներդրումներն ու խնայողությունները մեզանից շատերին ավելի ապահով են դարձրել: Հարցն այն է, թե արդյոք պատմական այս միտումը ապագա սերունդներն ավելի ապահով կդարձնի: Պատասխանը կապված է ծախսերի ավելացման հնարավորությանը: Եթե որոշ ծախսեր, ինչպիսիք են բնապահպանական ծախսերը, ավելի մեծ լինեն, քան ապագա սերունդների հարստությունը, ապա սերունդների՝ ավելի լավ պայմաններում ապրելու մասին խոսելն անգամ ավելորդ է:

Ամերիկացի մտածող Հանս Ջոնասն իր «Պատասխանատվության հրամայականը» աշխատության մեջ, հանգամանորեն անդրադառնալով սերունդների միջև պատասխանատվությանը, նշում է, որ ժամանակի ընթացքում ներկա սերունդները պետք է ավելի ու ավելի հակված լինեն ապագա սերունդների հանդեպ պատասխանատվություն ստանձնելուն: Նման դիրքորոշումը հեղինակը բացատրում է պայմանավորող մի քանի գործոններով. դրանցից մեկը ժամանակակից տեխնոլոգիաների՝

մարդկանց և բնության ճակատագրին ներագդելու բարձրացած ներուժն է: Այն, ինչ ժամանակին թողնվում էր ճակատագրին, հիմա արդեն մտնում է մարդկային վերահսկողության ոլորտ: Մյուս գործոնը մարդկանց հնարավորությունների սպեկտրի ընդլայնումն է, մասնավորապես՝ վտանգների ու ռիսկերի վաղ հայտնաբերման հետ կապված [3]: Ըստ Ջոնասի՝ վերոնշյալ միտումներն անխուսափելիորեն հանգեցնում են պատասխանատվության ընդլայնմանը: Ներկայիս գործողությունների հնարավոր հետևանքների մասին գիտակցումը, ինչպես նաև շատ գործողություններից զերծ մնալը մեզ ստիպում է ստանձնել ապագա սերունդների հանդեպ համապատասխան պատասխանատվություն: «Մենք պատասխանատվություն ենք կրում ոչ թե ապագա մարդկային անհատների, այլ **մարդու գաղափարի (Idea of Man)** առջև, որն այնպիսին է, որ պահանջում է նրա մարմնավորման ներկայությունն աշխարհում» [3]: Մեր պատասխանատվությունն ուղղված է մարդկության գաղափարին, որը գոյաբանական գաղափար է, այն գաղափարին, թե ինչ պետք է գոյություն ունենա, որը հրամայական է ստեղծում մարդկության գոյությունը շարունակելու համար [4]: Ապագա սերունդների հանդեպ պատասխանատվության արդարացումը, ըստ Ջոնասի, հրամայական է դառնում ապագա սերունդների գոյության համար, քանի որ նրանք պատասխանատվություն պահանջող գոյաբանական գաղափարի մի մասն են: Սակայն մտածողը նաև ընդգծում է, որ կա պատասխանատվության սուբյեկտիվ բաղադրիչ. մարդիկ իսկապես զգում են պատասխանատվություն և պատրաստ են գործելու: Ջոնասի՝ ապագա սերունդների հանդեպ պատասխանատվությանը վերաբերող մտայնություններում պետք է առանձնակի ուշադրության արժանացնել այն փաստը, որ ըստ նրա՝ մարդկությունը պետք է ինքն իրեն դաստիարակի այնպես, որ հոգատարություն զգա ապագա սերունդների հանդեպ՝ հետևապես պատրաստ լինելով գործել անվտանգ դարձնելով վերջիններիս գոյությունը:

Հարկ է նշել՝ Ջոնասը պնդում է, որ ապագա սերունդների առջև մեր պատասխանատվությունը ենթադրում է հետևյալ նորմատիվային պահանջը: «Գործե՛ք այնպես, որ ձեր գործողությունների հետևանքները համատեղելի լինեն իսկական մարդկային կյանքի շարունակականության հետ»: [3] Ջոնասի կարծիքով՝ մենք պետք է պահպանենք ապագա սերունդների համար ազատ ընտրության հնարավորությունը: Մտածողի հայացքներում առանցքային նշանակություն ունի մարդու ազատության գաղափարը, որը նա կապում

է ապագա սերունդների հանդեպ պատասխանատվությանը: Ըստ Ջոնասի՝ ազատությունը պատասխանատվության անհրաժեշտ պայման է. այն թույլ է տալիս մարդկանց հոգ տանել միմյանց և այլ արարածների մասին: «Ազատության ժամանակավոր կորուստը կարող է հանդուրժելի լինել, բայց մշտական կորուստը երբեք ընդունելի չէ», - նշում է Ջոնասը [2]:

Թրեմեյն այս առիթով կարծես շարունակում է Ջոնասի միտքը. «Գիտելիքների աճով մեծանում է իշխանությունը, բայց միննույն ժամանակ մեծանում է նաև պատասխանատվությունը» [7]: Թրեմեյը, ըստ էության, նկատի ունի այն հանգամանքը, որ մարդկային գիտելիքի աճով էլ պայմանավորված է մարդու իշխանությունը բնության նկատմամբ, որի արդյունքում էլ անհրաժեշտաբար մեծանում է պատասխանատվության աստիճանը:

Կարող է հարց առաջանալ՝ ինչպես կարող ենք պատասխանատվություն կրել կամ ունենալ որոշակի պարտավորություններ ապագայի մարդկանց նկատմամբ, եթե վերջիններիս ինքնությունն անգամ դետերմինացված չէ: Այսպիսի հարցադրումը հիմնովին արդարացված է: Մարդկային գործունեության առօրեական մակարդակում գուցե անգամ տարօրինակ թվա հիմնախնդրին հոգուտ փաստարկներ ներկայացնելը: Փիլիսոփայական համատեքստում, սակայն, հաճախ նշվում է, որ տարածության այս կամ այն կետում գտնվելը մարդու բարոյական կարևորագույն հատկանիշ չէ, որը կսահմանի անհատի արժեքային լինելը, հետևաբար՝ ժամանակային գործոնը նույնպես չպետք է դիտարկել այդպիսին: Այսինքն՝ անկախ այն բանից, թե ժամանակի որ հատվածում է անհատը, վերջինիս հանդեպ պատասխանատվությունը անձեռնմխելի է: Այս դեպքում ապագա մարդկանց ինքնության անորոշությունը ընդամենը ոչ հրատապ լինելու արդյունք է: Նշվածից կարելի է ենթադրել, որ վերջիններիս ինքնությունը կորոշարկվի հրատապության համապատասխան պայմաններում դիտարկվելիս: Մենք կարող ենք կարեկցանք ու պատասխանատվություն զգալ տարվա սկզբին Ավստրալիայում բռնկված մասսայական հրդեհների հետևանքով տուժածների կամ վերջին շրջանում Չինաստանում տարածված վիրուսի զոհերի հանդեպ, այսինքն՝ մենք բարոյապես պատասխանատու և ինչ-որ տեղ նաև պարտավորված ենք զգում թեթևացնելու մոլորակի մեկ այլ մասում ապրող մարդկանց ողբերգությունը՝ բնավ չիմանալով, թե ովքեր են նրանք: Նույն օրինաչափությունն էլ գործում է ապագա սերունդների

հանդեպ պատասխանատվություն կրելու հարցում՝ անկախ ժամանակային ու ինքնության անորոշության գործոններից: Տեղին է նկատում Թրեմեյը, որ «մենք հաճախ պարտավորված ենք զգում **դեռ չորոշված (indeterminate)** մարդկանց հանդեպ, և կարևոր չէ՝ նրանք արդեն ծնվել են, թե ոչ» [6]: Փարթրիջը համեմատաբար ավելի պարզ եղանակով է բացատրում վերը նշվածը: «Եթե ականագերծման փոս եմ փորել, ապա պարտավոր եմ վերջում այն հողով լցնել, որպեսզի ոչ ոք հետագայում չտուժի» [5]: Եվ դա, ըստ Փարթրիջի, ոչ մի կապ չունի այն բանի հետ, թե արդյոք արդեն ծնվել է մի մարդ, ով կարող է տուժել, եթե ինքը չկատարի իր պարտավորությունները:

Այնուամենայնիվ, ապագայի էթիկայի գաղափարը որոշ առարկություններ է առաջացնում. որոշ քննադատներ պնդում են, որ ապագայի էթիկայի այս գաղափարը հանգեցնում է երկարաժամկետ պայմաններում ապագա պատասխանատվության անանունությանը (anonymity): Պատասխանատվությունը դառնում է չափազանց անորոշ, եթե առանց հաշվի առնելու դերային փոխհարաբերությունների ամբողջ բարդությունը, այն ուղղված է մարդկանց, որոնք համարվում են վերացական, միատարր անհատներ, ում մենք չգիտենք և չենք էլ կարող իմանալ, քանի որ նրանք ապրելու են հեռավոր ապագայում: Մյուս քննադատները սահմանափակվում են խնդրո քննադատության պրագմատիկ տեսանկյունով՝ ուշադրության արժանացնելով այն հարցը, թե արդյոք իրական բարոյահոգեբանական պայմաններում կարելի է ակնկալել, որ անհատը ոչ միայն խոսքով, այլև գործով ցույց կտա իր հավատարմությունը [7]:

Նշվածների շարքին կարելի է դասել նաև ժամանակակից քաղաքական մտածողներից մեկին՝ Ավներ դե-Շալիտին, որը նույնպես հակված է մտածելու, որ ներկայիս սերունդները պարտավորություններ ունեն ապագա սերունդների հանդեպ, և այս դատողությունն ամրապնդելու համար փիլիսոփան երկու փաստարկ է ներկայացնում, որոնցից առաջինն ու ավելի կարևորը համայնավարական շեշտադրում ունի: Ըստ դե-Շալիտի՝ մենք պարտավոր ենք արդարացի լինել մեր համայնքի բոլոր անդամների նկատմամբ՝ անկախ վերջիններիս ժամանակային կարգավիճակից, քանի որ նրանք կրում են բարոյական մի շարք առանձնահատկություններ, որոնք մենք ենք կրում: Սա, ի դեպ, այն դեպքն է, երբ պարտավորությունները ծագում են համայնքի միջև հարաբերություններից: Մտածողը ներկայացնում է իր երկրորդ փաստարկը, որը, ի տարբերություն առաջինի, կապված չէ

համայնավարական հարաբերություններից: «Կա պարտավորություն **ոչ յուրայինների (non-members)** նկատմամբ, որը ենթադրում է, որ մենք պետք է զերծ մնանք այլ մարդկանց վնաս հասցնելուց» [1]: «Այդ պարտականությունը կոչվում է **մարդասիրություն** և վերաբերում է ուրիշների բարեկեցությանը» [1]: Դե-Շալիտը կարծում է, որ բարոյական չէ անտեսել ուրիշների տառապանքները՝ անկախ նրանց տարածական և ժամանակային կարգավիճակից: Փաստորեն, Դե-Շալիտը ապագա սերունդների հանդեպ մեր պարտավորությունները ներկայացնում է **արդարության և մարդասիրության** նժարի տեսքով՝ կարևորելով դրանց ճիշտ հավասարակշռությունն ու բաշխումը:

Բացի այդ, հարկ է նշել, որ Դե-Շալիտը **սերունդների միջև միջազգային արդարության (international intergenerational justice)** անհրաժեշտություն է տեսնում: Այս անհրաժեշտությունը հիմնված է այն փաստի վրա, որ համայնքները նույնպես կապված են միմյանց [4]: Եթե մի համայնք քայլեր ձեռնարկի իր ապագա անդամների ռեսուրսներն ու բարեկեցությունն ապահովելու համար, մյուս համայնքը կարող է ամեն բան անել այդ քայլերը խափանելու համար: Տարբեր համայնքների միջև, որոնք ունեն գրեթե նույն նպատակը, այն է՝ ապահովել սերունդների բարօրությունը, առաջանում է շահերի բախում: Հենց այս պատճառով է անհրաժեշտ սերունդների միջև միջազգային արդարություն՝ ըստ մտածողի: Ակնհայտ է, որ միջազգային ինչ-որ համագործակցության մեծ պահանջ կա՝ ապագա սերունդների հանդեպ պատասխանատվության հետ կապված: [4] Այնուամենայնիվ, սա հարցի մյուս կողմն է ու թերևս ոչ այնքան առնչակից մեր թեմային:

Վերադառնալով մեր խնդրին՝ կարելի է առանձնացնել ապագա սերունդների հանդեպ պատասխանատվության **լավատեսական և հոռետեսական հարացույցներ**: Լավատեսական հարացույցը հաշվի է առնում ապագա սերունդների համար պատասխանատվությունը առաջին հերթին որպես պարտավորություն՝ քիչ թե շատ հուսալի առաջընթաց ապահովող գործընթաց, որը սկսվում է ներկայումս և կշարունակվի ապագայում: Ըստ այս հարացույցի՝ մեր՝ ապագա սերունդների հանդեպ պատասխանատվությունը երաշխավորում է որոշակի առաջընթաց, որից օգտվելու են ապագա սերունդները: Այս հարացույցը, որտեղ ապագա սերունդները ընդհանուր առմամբ ավելի լավ վիճակում են, քան ներկայիս սերունդը, բնորոշ է լուսավորականության, ազատական քաղաքական փիլիսոփայությանը՝ ներառյալ Ջոն Ռոլսի արդարության տեսությունը (վերջինիս

կանդրադառնանք հաջորդ գլխում), և փիլիսոփայական այլ ուղղություններին: Չնայած գոյություն ունեցող տարբերություններին՝ այս դպրոցների ներկայացուցիչները կիսում են այն կարծիքը, որ ապագան կհանգեցնի աճող կատարելության (Կոնդորսե), բարեկեցության (Ռոլս, նեոկլասիցիզմ) կամ աշխատանքի տանջանքների նվազեցման (Մարքս) [7]:

Ի հակադրություն լավատեսական հարացույցի՝ հոռետեսականը ապագա սերունդներին տեսնում է ավելի վատթար վիճակում, քան ներկայիս սերունդներն են: «Այս պարագայում ապագա սերունդների հանդեպ պատասխանատվությունը կրում է պահպանողական բնույթ և առաջին հերթին ներառում ստատուս-քվոն պահպանելու հանձնարարականը՝ լինի դա տեխնոլոգիական, տնտեսական կամ մշակութային բնույթի» [7]: Հոռետեսական հարացույցը հիմք է դառնում 19-րդ դարում Մալթուսականության, ինչպես նաև 20-րդ դարում եվգենիկայի ձևավորման համար, որոնցում հիմնական մտահոգությունը ապագա սերունդների վատթարացման, քան թե բարելավման հույսն է: Մալթուսականության շրջանակներում գլխավոր մտահոգությունը, ինչպես գիտենք, բնակչության անսահմանափակ աճի խնդիրն է, իսկ եվգենիկայում՝ գենետիկական ֆոնդի դեգեներացիան:

Մենք, փաստորեն, ապրում ենք այնպիսի դարաշրջանում, որտեղ տնտեսական և տեխնոլոգիական նախադեպը չունեցող առաջխաղացումների հետ մեկտեղ գործ ունենք մի շարք բացասական հետևանքների հետ, այդ թվում՝ բնակլիմայական խնդիրներ, ռեսուրսների սպառում և այլն: Նմանատիպ իրավիճակը ապագա սերունդների բարեկեցության մասին մտածելու տեղիք է տալիս: Այս պարագայում առնչվում ենք միջսերնդային հարաբերություններին, որոնք բխումնային կարծիքների ու տեսությունների առիթ են տալիս: Միջսերնդային արդարության շրջանակներում ապագա սերունդների հանդեպ պատասխանատվության հարցին շատ տեսաբաններ լավատեսորեն են վերաբերվում՝ ապավինելով տեխնոլոգիական առաջընթացին ու մարդկային այլ զարգացած կարողությունների, ուստի՝ հակված են այն կարծիքին, որ մենք չպետք է որևէ պատասխանատվություն ունենանք ապագա սերունդների հանդեպ: Ի հակադրություն սրան՝ մտածողների սովոր գանգված կարծում է, որ մենք, այնուամենայնիվ, ունենք որոշակի պատասխանատվություն և պարտավորություններ ապագա սերունդների հանդեպ: Այս համատեքստում քննարկվում է նաև այն հարցը, թե ներկայիս

սերունդների հետ համեմատած՝ ինչպիսի պայմաններում կապրեն ապագա սերունդները: Կարևոր է նկատել, սակայն, որ ապագա սերունդների հանդեպ պատասխանատվությանը վերաբերող մտայնությունները նորմատիվային բնույթ ունեն:

**ПРОБЛЕМА ОТВЕТСТВЕННОСТИ ПЕРЕД БУДУЩИМИ
ПОКОЛЕНИЯМИ В КОНТЕКСТЕ МЕЖПОКОЛЕНЧЕСКОЙ
СПРАВЕДЛИВОСТИ**

Симонян Г. С.

В статье обсуждается проблема нынешнего поколения о принятии на себя ответственности перед будущими поколениями, которая получает более важный акцент в рамках обсуждения ссылки на межпоколенческую справедливость. В работе затрагиваются мотивы, которые готовят подходящую почву для заботы о благополучии людей будущего. В статье представлены взгляды некоторых мыслителей новейшего периода, а также характеристика оптимистических и пессимистических парадигм ответственности перед будущими поколениями.

Ключевые слова: межпоколенческая справедливость, ответственность, будущие поколения, оптимистическая парадигма, пессимистическая парадигма.

**THE PROBLEM OF RESPONSIBILITY TOWARDS FUTURE GENERATIONS
IN THE CONTEXT OF INTERGENERATIONAL JUSTICE**

Simonyan H. S.

The article discusses the responsibility towards future generations, which is of greater importance in the context of the discussion of intergenerational justice. The work also addresses the motives which provide appropriate ground for the care of future generation. The article presents some of the views of modern thinkers as well as the characteristics of optimistic and pessimistic paradigms of responsibility towards future generations.

Keywords: intergenerational justice, responsibility, future generations, optimistic paradigm, pessimistic paradigm.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. De-Shalit A. Why Posterity Matters. Environmental Policies and Future Generations. Routledge 1st Edition. London and New York. 1995. 176 p.
2. Jonas H. Mortality and Morality: A Search for the Good after Auschwitz. Northwestern University Press. US. 1996. 218 p.
3. Jonas H. The Imperative of Responsibility: In Search of an Ethics for the Technological Age. University of Chicago Press. US. 1985. 263 p.
4. Löfquist L. Ethics Beyond Finitude: Responsibility Towards Future Generations and Nuclear Waste Management. Uppsala University Press. Sweden. 2008. 279 p.
5. Scherer D. Upstream/Downstream: Issues in Environmental Ethics. Temple University Press. Philadelphia. US. 1990. 288 p.
6. Tremmel J. C. A Theory of Intergenerational Justice. Earthscan. London. UK. 2006. 275 p.
7. Tremmel J. C. Handbook of Intergenerational Justice. Edward Elgar Publishing Limited. Cheltenham, UK. 2006. 350 p.

Տեղեկություններ հեղինակի մասին

Միմոնյան Հ. Մ. – ուսանող

Երևանի պետական համալսարան

Էլ. փոստ՝ hamlet.simonyan.99@gmail.com

Տրվել է խմբագրություն 07.03.2020